

## Պաշտոն

Հետգործառնական բաժնի մասնագետ

## Աշխարհագրական տարածք «Մասիս»

### Աշխատանքի նկարագրություն

- Իրականացնել վարկավորման գործընթացի հետ կապված վարկային, երաշխավորության, գրավի պայմանագրերի պատրաստում,
- Իրականացնել գրավի պայմանագրերի կազմում և դրանց նոտարական վավերացում, անհրաժեշտության դեպքում նաև դրանց պետական գրանցում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակներում,
- Ընկերության համակարգչային ծրագրում մուտքագրել հաճախորդի տվյալներ և վարկային, գրավի ու երաշխավորության պայմանագրեր,
- Իրականացնել վարկային փաթեթների կազմում և հաշվառում, ինչպես նաև այլ աշխատանքներ՝ կապված փաստաթղթերի կազմման և շրջանառության հետ,
- Իրականացնել Վարկային կազմակերպության ներքին կանոնակարգերով սահմանված և մասնաճյուղի կառավարչի հանձնարարությամբ այլ առաջադրանքներ:

### Պահանջվող որակավում

- Բարձրագույն կրթություն՝ Բակալավրի կամ ավելի բարձր որակավորմամբ
- Աշխատանքային փորձը ՀՀ բանկային համակարգում ցանկալի է
- Հիմնական համակարգչային հմտությունների իմացություն, ՀԾ Բանկ 4.0-ի իմացությունը ցանկալի է
- Անգլերեն լեզվի իմացությունը ցանկալի է
- Մանրամասներին ուշադրություն դարձնելու կարողություն

**Փոխհատուցում/աշխատավարձ.** Պայմանական՝ կախված թեկնածուի մասնագիտական որակավորումից և համապատասխան աշխատանքային փորձից

**Դիմումի ընթացակարգը.** Հետաքրքրված անձինք կարող են իրենց նկարով ինքնակենսագրականը (CV) ուղարկել [hr@card.am](mailto:hr@card.am) էլեկտրոնային հասցեին՝ նամակի վերնագրի տողում հստակ նշելով պաշտոնի անվանումը («Վարկային մասնագետ Մասիսում»), կամ նկարով ինքնակենսագրականի (CV) թղթային տարբերակը ներկայացնել Ընկերության գլխամասային գրասենյակ. հասցեն՝ Երևան 0037, Ազատության 1/21 կամ «Մասիս» մասնաճյուղի գրասենյակ. հասցեն՝ Արարատի մարզ, ք. Մասիս, Արարատյան 15: